ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
Ի ԼՐՈՒՄՆ ԼՄԱՀ -ԳՀԾՁԲ-24/5 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք.Ալավերդի 25 .03.2024թ

Ալավերդու համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դ.Ղումաշյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հիդրոշին-ՋԿ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ.Ղուղեյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու),հիմք ընդունելով ԼՄԱՀ -ԳՀԾՁԲ-24/5 ծածկագրով 15.03.2024թ. կնքված 7.5 և 7.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկա

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ համաձայնագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին ավելացնել ԼՄԱՀ -ԳՀԾՁԲ-24/5 ծածկագրով պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը 15 օրացուցային օրով:

1.2 Ծառայությունների մատուցման նոր վերջնաժամկետ սահմանել 15.04.2024թ.:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրի մեկնաբանման, իրագործման կամ կիրառման ժամանակ ծագած տարաձայնությունները, ինչպես նաև համաձայնագրից բխող բոլոր հարցերը լուծվում են երկկողմ բանակցությունների ճանապարհով, համաձայնության չգալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2 Սույն համաձայնագիրը գործողության մեջ է մտնում ստորագրման պահից, հանդիսանում է ԼՄԱՀ -ԳՀԾՁԲ-24/5 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը :

2.3 Պայմանագրի `սույն համաձայնագրում չնշված կետերը մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակից յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Զորավար Անդրանիկի 8/1 | «Հիդրոշին-ՋԿ» ՍՊԸ |
| Ալավերդու համայնքապետարան | Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Նալբանդյան 89 |
| ՀՀ ֆինանսների Նախարարության Գործառնական Վարչություն | «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 06967886 | Հ/Հ 1150005236846 |
| Հ/Հ 900262121107 | ՀՎՀՀ 08418427 |
| Համայնքի ղեկավար Դ.Ղումաշյան | Տնօրեն Մ.Ղուղեյան |
| ------------------------------ /ստորագրություն/ | ------------------------------ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ԼՄԱՀ -ԳՀԾՁԲ-24/5 ծածկագրով համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | Չ/Մ | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | Ծառայության մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 77341100 | Ծառերի էտման ծառայություն | 1. Ալավերդի քաղաքի տարածքում գտնվող , քաղաքացիների ազատ տեղաշարժին խոչընդոտող, ինչպես նաև վերջիններիս կյանքին ու առողջությանը սպառնացող ու վտանգ ներկայացնող ծերացած/չորացած/ ծառերի խոր էտում(ծառաբնի հիմքից հաշված է 4-4,5 մ բարձրությունից՝ կտրում)/հատում/.<br>• 30սմ և ավելի տրամագծով – 230ծառ:<br>2.Հատված ծառերի, ինչպես նաև վերջիններիս կմախքային և սաղարթային ճյուղերի խոր էտման /կամ կտրման /արդյունում գոյացած փայտանյութի ու թեփի (թեփն անհրաժեշտ է պարկավորել) տեղափոխումը և պահեստավորումը իրականացնել պատվիրատուի կողմից նշված վայրում(առավելագույն հեռավորությունը՝ մինչև 5 կմ):Խոր էտման/կամ հատման/ արդյունքում ստացված փայտանյութը կտրտել 1 մետրանոց կտորներով(< մետրովկա>):<br><br>3. <Կատարող> կողմ կազմակերպության մեքենա-սարքավորումները և անհրաժեշտ այլ մեխանիզմները պետք է լինեն սարքին վիճակում , ապահովեն անխափան և անվտանգ աշխատանքային գործընթաց :<br><br>4. Աշխատանքներն իրականացնելիս, պահանջվում է՝ պահպանել և ապահովել աշխատանքային անվտանգության կանոններն ու անհրաժեշտ այլ պայմանները:/թվով 230 ծառ/ | դրամ | 4350000 | 1 | Ալավերդի համայնքում՝ ըստ պատվիրատուի կողմից նշված հասցեների | Ձեռքբերման նախընտրելի ժամկետ սահմանել պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից<br><br>մինչև 15.04.2024թ |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| Զորավար Անդրանիկի 8/1<br>Ալավերդու համայնքապետարան<br>ՀՀ ֆինանսների Նախարարության<br>Գործառնական Վարչություն<br>ՀՎՀՀ 06967886<br>Հ/Հ 900262121107<br>Համայնքի ղեկավար՝ Դ.Ղումաշյան<br><br>--------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | «Հիդրոշին-ՋԿ» ՍՊԸ<br>Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ,<br>Նալբանդյան 89<br>«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 1150005236846<br>ՀՎՀՀ 08418427<br>Տնօրեն՝ Մ.Ղուղեյան<br><br>--------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |